## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆԻ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՍՏՂԻԿ ՄԱՐԱԲՅԱՆԻ ՎՐԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Գործուղված անձինք

   *Արայիկ Խզմալյան,*
   *Աստղիկ Մարաբյան*

2. Զբաղեցրած պաշտոնը

   *ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ,*
   *ՀՀ ԿԳՄՍՆ մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետ*

3. Գործուղման վայրը և ժամկետները

   *Վրաստան, Թբիլիսի, դեկտեմբերի 6-8, 2021*

4. Հրավիրող կողմը

   *Վրաստանի մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարարություն*

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

   - *Մշակույթի ոլորտում հայ-վրացական համագործակցության ընդլայնում.*
   - *Մշակույթի ոլորտում գործողությունների ծրագրի մշակում:*

6. Քննարկված թեմաները.

   - *Մշակույթի ոլորտում համագործակցության նոր ձևաչափի և օրակարգի հաստատում.*
   - *մշակութային ժառանգության և արվեստների ոլորտներում համատեղ ծրագրերի իրականացում.*
   - *հնագիտական արժեքների համատեղ ցուցադրության կազմակերպում.*
   - *կինոարտադրության բնագավառում համատեղ նախագծերի իրականացում.*
   - *Գանձայում Վահան Տերյանի տուն-թանգարանի վերափոխման ծրագիր.*
   - *Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական պրոֆեսիոնալ թատրոնի վերաբացում:*

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

***Հանդիպում Վրաստանի մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարարի առաջին տեղակալ Կախա Սիխարուլիձեի հետ.***

*Կարևորելով երկու պետությունների պատմական փոխառնչությունները, ինչպես նաև մշակույթի ոլորտում համագործակցության հարուստ ավանդույթները ՝ քննարկվեց համատեղ ծրագրային նոր նախաձեռնությունների իրականացումը՝ հիմք ընդունելով նաև համաշխարհային նոր մարտահրավերները: Կարևորվեց հայ-վրացական մշակութային համագործակցության նոր օրակարգի և երկու երկրների մշակութային քաղաքականության համադրման նոր որակի ապահովման պայմանների ստեղծումը: Բարձր գնահատելով համագործակցությունն ինչպես ժամանակակից արվեստի, այնպես էլ ժառանգության ոլորտներում, առաջարկվեց փոխել համագործակցության տրամաբանությունը, և զույգ մասնակցի կարգավիճակից անցում կատարել համատեղ նախաձեռնությունների ոլորտ՝ նպաստելով երկու ազգերի փոխադարձ ճանաչելիությանը, հարգանքի ու բարեկամության խորացմանը, արժեքների հանդեպ պատասխանատվության մեծացմանը: Առաջարկվեց մշակել գովազդա-տեղեկատվական համատեղ արշավի ծրագիր և միջազգային հարթակներում հանդես գալ միասնական դրամաշնորհային հայտերով:*

***Այց Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական պրոֆեսիոնալ թատրոն.***

*Հայկական պատվիրակությունը ծանոթացավ թատրոնի վերանորոգման աշխատանքներին, քննարկվեցին թատրոնի՝ 2022 թ. սեպտեմբերին նախատեսվող վերաբացմանն շրջանակում հայկական կոլեկտիվների մասնակցության հնարավորությունները:*

***Հանդիպում Վրաստանի ազգային թանգարանում և և Ջանսուղ Կախիձեի անվան Թբիլիսիի երաժշտական-մշակութային կենտրոնում.***

*Քննարկվեցին փորձի փոխանակման և համատեղ նախագծերի իրականացման, ինստիտուցիոնալ համագործակցության ընդլայնման, երկու երկրներում իրականացվող ծրագրերի մասնակցության ապահովման հնարավորությունները:*

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- *Որոշվեց ձևավորել համագործակցության նոր օրակարգ և մշակել գործողությունների ծրագիր.*
- *Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական պրոֆեսիոնալ թատրոնի վերաբացման շրջանակում ժամանակավոր ցուցադրության կազմակերպում «Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» ՊՈԱԿ-ի հավաքածուների հիման վրա.*

- *Ջանսուղ Կախիձեի անվան Թբիլիսիի երաժշտական-մշակութային կենտրոնի հետ համատեղ նախագծերի իրականացում.*
- *Հնագիտական արժեքների համատեղ ցուցադրության կազմակերպում.*
- *Պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել հանդիպումների ձևաչափը ինչպես պետական, այնպես էլ ոլորտի ներկայացուցիչների անմիջական համագործակցության մակարդակով:*

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

*Առաջարկվում է հաջորդ հանդիպումը կազմակերպել 2022 թ. Հայաստանում և հյուրընկալել Վրաստանի պաշտոնական պատվիրակությանը՝ համագործակցության հետագա զարգացման և ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու նպատակով:*

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

*Դեկտեմբերի 10, 2021*

*Արայիկ Խզմալյան*

*Աստղիկ Մարաբյան*